

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻ ԳԱԻԱՌ

Կ Ա Մ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ

Ե. ԼԱԼԱՅԵԱՆԻ

ԲՆԱԳՐՈՒԹԻԻՆ

Սահմանները.—Նոր-Բայազէտի գաւառը կազմում է Երևան նահանգի հիւսիս-արևմտեան մասը և տարածւում է 39° 55'—40° 40' հիւսիսային լայնութեան և 62° 2'—63° 41' արևելեան երկարութեան աստիճանների միջև։ Նրա սահմաններն են. հիւսիսից՝ Երևանեան նահանգի Աղէքսանդրապոլի գաւառը և Գանձակի նահանգի Ղազախի և Գանձակի գաւառները, արևելքից՝ Նոյն նահանգի Ջիվանշիրի գաւառը, հարաւից՝ Երևանեան նահանգի Շարուր-Դարալագեազի և Երևանի գաւառները, և արևմուտքից Նոյն նահանգի Երևանի և Էջմիածնի գաւառները։

Նոր-Բայազէտի գաւառի տարածութիւնն է 577585 դեսիաւաին, 710 թ. սաժէն¹⁾, որից՝

Գիւղատեղի	1842 դես.	359 թառ.	սաժէն.
(Այս հաշւում միայն տնատեղ)	1581 դես.	1910 թ.	սաժէն.
Գերեզմանատեղի.	45 դես.	2164 թ.	սաժէն.
Ճանապարհներ	2455 դես.	651 թ.	սաժէն.
Վարելահող	122235 դես.	1668 թ.	սաժէն.
Այգիներ	14 դես.	480 թ.	սաժէն.

¹⁾ Труды Закавказского Статистического Комитета. Земельные дачи Эриванской губ. вып. II Дачи Ново-баязетского уѣзда. Тифлиς 1905 г.

Անտառներ	9823 դես.	1458 ք. սածեն.
Մարգագետին	14222 դես.	1069 ք. սածեն.
Արօտատեղի	288836 դես.	1950 ք. սածեն.
Ջրի տակ, ընդամենը՝	130822 դես.	1629 ք. սածեն.
որից 1) ջրանցքների տակ	121 դես.	658 ք. սածեն.
2) գետերի, վտակների և աղբիւրների տակ	455 դես.	693 ք. սածեն.
Զարդինարերող հողեր	43 դես.	1683 ք. սածեն.

Իւր ընդարձակութեամբ Նոր-Բայազետի դաւառը Երևանեան նահանգի գաւառների մէջ բռնում է առաջին տեղը:

Նոր-Բայազետի գաւառը բաղկացած է Սևանայ լճի զոգաւորութիւնից, Սողի կամ Մազրայի և կամ Գիլի դաշտավայրից և Զանգուի կամ Դարաչիչակի հովտից:

Սեւանայ լճի զոգաւորութիւնը սահմանափակուած է հիւսիսից Փամբակի լեռնաշղթայի վերջաւորութեամբ և Շահ-զաղի լեռնաշղթայով, արևմուտքից էշակ-Մէյզանու և Ահմանկանի, հարաւից՝ հարաւային Գոզչայի լեռնաշղթաներով, և արևելքից՝ Կոնզուրօ-Ալանգեօզի լեռնաշղթայի հիւսիսային մասով: Այս զոգաւորութիւնը ուղղանկիւն եռանկիւնու ձև ունի, որի հարաւ-արևելեան անկիւնը կտրուած է, և ներկայացնում է ամէն կողմից փակուած մի տարածութիւն, բացի այն մասից, որտեղից դուրս է գալիս Զանգու գետը: Այս զոգաւորութեան ամենամեծ երկարութիւնն է 112 վերստ: Մակերեսը հաւասար է 4200 ք. վերստի, որից 1204,2 բռնում է լիճը:

Սողի կամ Մազրի եւ կամ Գիլի դաշտավայրը տարածուած է Սևանայ լճի հարաւ-արևելեան անկիւնում, որովհետև Սատանախաչ գիւղից այն կողմը Շահ-զաղի լեռնաշղթան դէպի արևելք ուղղուելով հեռանում է ծովի ափից: Այս դաշտավայրը սահմանափակուած է հիւսիսից Շահ-զաղի, արևելքից Կոնզուրօ-Ալանգեօզի և հարաւից Ալլագեօյու լեռնաշղթաներով: Մրա երկարութիւնը հասնում է մինչև 30 և լայնութիւնը մինչև 20 վերստի:

Դարաչիչակի հովիթը, (որ Զընճըրլի լեռան ձորանովտներից մինն է), տարածուած է Սևանայ լճի արևմտա-հիւսիսային մասում, մօտ 35 վերստ երկարութեամբ. անտառապատ է և զեղեցիկ ամառանոցներ կազմում:

Լեռներ.—Այստեղ տարածուած են զլիսաւորապէս Փոքր-Կովկասի ճիւղերը, որոնք շրջապատում են Սևանայ լճի զոգաւորութիւնը: Ամբողջ հիւսիս-արևելեան սահմանագծում ձգւում է Շահ-զաղի լեռնաշղթան, որ միևնոյն ժամանակ կոչուած է նաև Արեւիկ, Գիւնէյ կամ Հիւսիս-Արեւելեան Գոզչայի լեռնաշղթայ: Սա ըս-

կիրքն է առնում Սեմիօնովկայի բարձրութիւնից (6972 ոտ.), և ձգւում է լճի անմիջապէս ափի երկարութեամբ և տեղ տեղ ուղղահայեաց իջնում նրա մէջ: Նաղեժդին գիւղին չհասած՝ ուղղւում է լճից փոքր ինչ արևելք, տարածելով դէպի լիճը բարձր ճիւղեր, որոնցից Աղ-Թափիկը (8,550) մի մեծ թերակղզի է կազմում, լճի մէջ ցցուած համանուն հրուանդանով:

Այս լեռնաշղթայի երկարութիւնը հասնում է 90 և լայնութիւնը մինչև 70 վերստի: Լեռնաշղթան հարուստ է հանքերով և պատած մացառով: Սրա գլխաւոր գազաթներն են.

Մարալիջա-դաղ	8565 ոտ.
Շիշ-թափա	7749
Սոխդ-բուլաղ	8722
Կիրկիդի-դաղ (Կոխդ-Ալմաղ)	9020
Այրիջա	8731
Աղա-թափա	8105
Շահ-դաղ	9573
Ալլա-գեօլլար	9789
Ղարա-Արխաչ	10081
Գինալ-դաղ	11057

Բարձրութիւններն են (вершины) Սեմիօնովկայի (7124 ոտ.), Ախ-Խոխուշի (9500 ոտ. ոչ պակաս) և Սատանխայի (9000 ոտ. ոչ պակաս):

Արևելեան կողմից այս միկնոյն Գինալ-դաղ կամ Կոնգուր-դաղից ձգւում է դէպի հարաւ Կոնգուր-Ալանգեօզի լեռնաշղթան, որ սահմանագծելով այս գաւառը՝ անցնում է Շարուր-Գարալա-գետազի և Նախիջևանի գաւառները: Այս լեռնաշղթայից Նոր-Բա-յաղէտի գաւառին կից գտնւում են հետևեալ գագաթները. Ինագ-դաղ (18547), Ուռուբասար կամ հին Ռըմբասար (8828), Ղզղալասի (9910), Կուսուր-դաղ (10,000), Քիքի-դաղ (11284):

Այս Քէթի-դաղ և Սարի-Էլ-Սարչայի գագաթներին միջև արևմուտքից մտնելով է Կոնգուր-Ալանգեօզի լեռնաշղթային Հարալայի Գոզլայի լեռնաշղթան, որ այլապէս կոչւում է Կեօզալ-դարու կամ Ալլա-գեօլու: Սելիմի բարձրութեամբ այս լեռնաշղթան բաժանւում է երկու մասի, որոնցից արևելեանը կազմուած է երկու շարք հրաբխային լեռներից, որոնք միանում են Շանըղ կամ Ճանիկ գագաթում: Այս լեռնաշղթայի երկարութիւնն է 65 վերստ, լայնութիւնը 60—70 վերստ: Սրա հիւսիսային լանջերը տարածւում են մինչև Սևանայ լիճը, իսկ հարաւայինները մինչև Վարոց ձորի Արևելեան-Արփաչայի միջին հոսանքը: Այս լեռնա-

շղթայից նոր Բայազէտի գաւառում գտնուում են հետեւեալ նշանաւոր գագաթները.

Գէթի գաղ	11284
Ալա-գեօլարն պաշի	10031
Դիք-փիլարան	11410
Գիւղալ-դարա	11606
Սողանլի	10926
Թուլուջա	11432
Ղարա-դայա	11178
Եանըղ (Շահբուլաղ)	11178

Այս շարաւային Գողչայի լեռնաշղթային Թոփ-դաղ գագաթի մօտ միանում է Ահմանկան լեռնաշղթան, վաղուց հանգած հրաբխային ձաղառածե գագաթներով, որոնցից միքանիսի մէջ գոյացել են բարձր, լեռնային լճեր: Այս լեռնաշղթայի լանջերը տարածուում են հիւսիս՝ մինչև Զանգու գետի ակունքը, արեւմուտք՝ մինչև Ատիեաման-գետակը, և Սեանայ լճի արեւմտեան ափերը: Այս լեռնաշղթան հնումը կոչուում էր Գեղամայ լեռներ: Սրա նըշանաւոր գագաթներն են.

Թոփ-դաղ	9546
Իքիջիլար	8885
Արխաշան	10139
Դաւա-գէօղ	11344
Փոքր Աղ-դաղ	10906
Մեծ Աղ-դաղ	11500
Զիարէտ	10388
Ահմանկան կամ Ղըղըլդաղ	11844
Ղարա-դաղ	11438
Զիարէտ	10941
Ուչ Թափալար	10710
Ղարա-չընդըլ	10115
Ղարա-դաղ	10623
Ուչ Թափալար	8281
Զան-Թափա	8379
Ուչ Թափալար	8252
Իուղղա-Թափա	7734
Ինակ-դաղ	7817
Բողու-դաղ	7894

Այս լեռնաշղթային է պատկանում նաև Սեանայ լճի հարաւային կողմում բարձրացող Սըչանլու և Աղմաղան կամ Արղըլլաւ-սար գագաթները: Այս վերջինը իւր անունն ստացել է, ասում

են, Արդուլլահ անուն մի մահմեդական երիտասարդից, որ քրիստոնէութիւն ընդունելու պատճառով նահատակուել է այդ լեռան գագաթին և որի գերեզմանը այժմ էլ ուխտատեղի է համարուում:

Գաւառի հիւսիս արևմտեան մասում ձգւում է Փամբակի լեռնաշղթան, որի Քոփի-հօլ գագաթից դէպի հարաւ-արևելք ձգւում է Կոչաչկոս կամ Եռակ-Մեղան լեռնաշղթան, որ Բալըղ-չայի գետաբերանի և Յամաքաբերդի միջև ուղղակի իջնում է Սեւանայ լճի մէջ: Այս լեռնաշղթայի երկարութիւնն է 20 վերստ, միջին բարձրութիւնը՝ 8000 ոտնաչափ:

Փամբակի լեռնաշղթայի Դաւա-տաշ գագաթից էլ ձգւում է դէպի հարաւ-արևելք Աննիլի կամ Միսլաոնի և կամ Պղնձանցի լեռնաշղթան: Մրա երկարութիւնն է 35 վերստ, լայնութիւնը համեմատ է մինչև 35 վերստի: Միջին բարձրութիւնը՝ 8500 ոտնաչափի: Այս լեռներն անտառապատ են, և կազմում են գեղեցիկ ամառանոցներ:

Լճեր.—Նոր-Բայազէտի գաւառի կենսատուն համարում է Սեւանայ լիճը, որ վերին աստիճանի գեղարուեստական տեսք ունի: Նրան ասանց չափազանցութեան կարելի է նմանեցնել մի կապուտակ կապերտի, որ տարածուած է պորփիրեայ դաշտի մէջ: Պորփիրեայ լեռներ, կարմիր և մանիշակային գոյների ամենայն հնարաւոր զանազանութեամբ, սրանց նման և քարածայռերը, անհեղեղ ձևերով, ամեն տեղ պորփիր, նոյն իսկ ամենաանուր շինութիւնների մէջ, (օրինակ, մի ախոս՝ որի պատերը շինուած էին այս գեղեցիկ քարի կոշկոռներով). թխորակ, բայց կարմրայատակ դիւրափուխր հողը կազմում է արտորայք, որոնց շուրջը պարփանկում է մի թխականաչ երէզ: Սքանչելի տեսարան ¹⁾:

Այն, աւելի քան սքանչելի տեսարան, մանուսանդ երբ մարդ դիտում է վերջնալոյսը՝ փողփողուած այս լճի կապուտակ և վերին աստիճանի յատակ ջրերի մէջ, երբ նկատում է բիւրաւոր ձկների խայտալը և կամ ծովային հարուստ բուսականութիւնը լճի յատակում:

Այս լիճը Օրդակուի և Քեօլանի-ղաւնի (նոյն գաւառի) բեւեռագիր արձանագրութիւնների մէջ կոչւում է «Suinia» որ ուրարտերէն «լիճ» կամ «աւազան» է նշանակուում: Հաւանօրէն այս անունից ծագել է Սիւնիի խօսքը, որ դարձել է այս լճի և սրա վրճակի յատուկ անունը և «Սեւանայ» կոչումը, որ կրում է այժմ այդ լիճն ու նրա միջի կղզին:

¹⁾ Gilles, Lettre sur Caucase. 293 յիշ. Ալիշան, Միսական. եր. 26:

Հայ մաստենագիրները, առնելով Մ. Յորենացուց, կոչում են նրան Գեղամայ ծով, իսկ շրջակայքը՝ Գեղարունի, յառաջացած համարելով Գեղամ նահապետի անունից, սակայն առելի հաւանական է, որ այն կոչումը ծագած լինի Օրդակուի բևեռագիր արձանագրութեան մէջ յիշուած Կիւնուցի երկրի անունից, որ վերաբերում էր Սևանայ լճի հիւսիս-արևմտեան մասին, այժմեան Օրդակու գիւղի շրջակայքին¹⁾։

Քուրքերը այս լճին կոչում են Գեօզ-չալ—կապուտակ դեռ, ինչպէս և Գեօզչալ-դարիա—կապուտակ լիճ, ի նկատի ունենալով նրա ջրի կապուտակ գոյնը։

Պարսիկները կոչում են Գարիաբիբին, այսինքն քաղցր-ծով, ի նկատ առնելով ջրի բարեհամ յատկութիւնը։

Ռուսները կոչում են Գոզչա և Սեւնգա, առաջինն առնելով թրքական Գէօզ-չալ կոչումից, իսկ երկրորդը՝ հայկական այն սխալ ստուգաբանութիւնից, թե Սևան անունը յառաջացել է Սև-Վանք խօսքերից, որ վերաբերում են լճի մէջ գտնուած կղզու վրայ կառուցուած Սև-Վանքին։

Սևանայ լիճը տարածուած է 40°8'50" և 40°38'8" հիւսիսային լայնութեան և 62°35'58" և 63°19'5" արևելեան երկարութեան աստիճանների միջև։ Սև ծովի մակերևոյթից 6316 ֆ. բարձրութիւն ունենալով, նա առելի բարձր է քան նոյն իսկ Կարնոյ և Վանանդի բարձրաւանդակները։

Բռնելով 1204,² ք. վերստ, կամ 24,³⁸ ք. մղոն և կամ 125478 դեսետին տարածութիւն, որ կազմում է այս գաւառի մակերևոյթի 23¹⁰/₁₀, ծովն առելի տկամ է, քան ձուածե, ու ձրդուում է հիւսիս-արևմուտքից դէպի հարաւ արևելք։ Նրա շրջապատն է 212 վերստ, երկարութիւնը Պալըլ-չայի բերանից մինչև Ջաղալու գիւղը՝ 70 վերստ։ Լայնութիւնը՝ ամենաընդարձակ մասում (արևելեան կողմում) հասնում է 31 վերստի, իսկ ամենանեղ մասում՝ մօտ 7¹/₂ վերստի։ Այս մասը գտնուում է Ադա-թափա թերակղզու, (արևելեան կողմից) և Շոր-գեօլ հրուանդանի (արևմուտքից) միջև, որոնք այդ աստիճան մօտենալով միմեանց, լիճը կարծես բաժանում են երկու անհաւասար մասերի. սրանցից փոքրը հիւսիս-արևմտեանն է, որ 340 ք. վ. տարածութիւն է բռնում և մտնում է ցամաքի մէջ հիւսիս արևմտեան ուղղութեամբ, երկու, անանուն ծոցերով, մինը Նիւնոզկա, միւրը՝ Զուրուխլու գիւղերի մօտ։ Սրա երկարութիւնը հասնում է 25 վերստի, լայնութիւնը 14 վ.։ Այս մասի հիւսիս-արևելեան և հարաւ-

¹⁾ Никольскій: Клинообразныя вадниці Закавказья.

արևմտեան ակերբ փոքր ինչ հարաւ են քաշուած և նրան սեղանակերպ դարձնուած, իսկ հիւսիս-արևմտեան կողմից ներս է ընկնուած մի հրուանդան (Յամաքարերդ)։ Միւս, հարաւ-արեւելեան աւազանը, որ բնուած է 860 ք. վերստ տարածութիւն, իւր ձևով յիշեցնուած է գաղաթը կարած մի ուղղանկիւն եռանկիւնի, որի հիմնագիծը կազմուած է հարաւային ակը, հիպոտենուզան հիւսիս-արեւելեանը և կատետը՝ արևմտեանը։

Սևանայ լիճը իւր արեւելեան մասում մի ժամանակ ունեցել է մի ծոց, որից բաժանուել է մի շատ նեղ ջրանցքով։ Գարբրի ընթացքում այս ջրանցքը լախացել է, ու վերջ ի վերջոյ կազմել այժմեան կարճ ու նեղ նեղուցը, որով և՛ նախկին ծոցը փոխուել է առանձին լճակի։ Այս լճակը կոչուած է Գիլլի, ինչպէս նաև Մագրի, կամ Ջողի լճակ։ Տարածուած է Մագրի դաշտավայրի ճահճոտ մասում։ Նրա շրջապատն է 7 վերստ, իսկ ամենալայն մասը 3 վերստ։ Այս լճակի մէջ թափուած են բաւականաչափ գետակներ, տանկուով իրենց նետ ահազին քանակութեան անօրգանական մարմիններ, որոնք նստում են լճի յատակին և այն աստիճան լցնում նրան, որ շատ տեղեր ճահճների են փոխարկուում։

Նկատուած է, որ Սևանայ լճի մակերևոյթը տարինների ընթացքում բաւական մեծ փոփոխութիւնների է ենթարկուում, այսպէս միայն անցեալ դարի սկզբից մինչև 1830 թուականը հետզհետէ ցածրացել է մինչև 9 ոտնաչափ, ապա սկսել է բարձրանալ և հասել է նախկին դրութեան 1843 թ. նորից նոյն չափ ցածացել է մինչև 1851 թ. ապա 9½ ոտնաչափ բարձրացել է մինչև 1860 թ. երբ կրկին սկսել է ցածանալ աւելի դանդաղ կերպով մինչև 1885 թ. 9 ոտնաչափ, երբ երեք տարի անփոփոխ մնալուց յետոյ կրկին սկսել է բարձրանալ, և այժմ էլ շարունակուած է բարձրանալ¹⁾։

Թէպէտ և կան միջանի ենթադրութիւններ ջրի մակերեւոյթի այս փոփոխութիւնը բացատրելու, սակայն դրանցից և՛ ոչ մինը չէ ընդունուած. և այս ճշտօրէն չի կարելի որոշել, մինչև որ տարինների ընթացքում լճի դանդաղան մասերում լիմնոգրաֆով չչափուի մակերևոյթի փոփոխութիւնը և չկատարուեն երկբաշարժական գիտողութիւններ։

Սևանայ լճի խորսիւնը ևս կատարելապէս չափուած չէ. և եղած թուերը միմեանցից շատ են տարբերուում. օր. գեներալ Կուտուզովը, որին 1839 թուին յանձնարարուած է եղել չափել

¹⁾ R. Siger, յիշուած Իվանովսկու յօդուածի մէջ. Землеведение. 1895 № 3—4.

տալ լիճը, գտել է, որ մէջ տեղի խորութիւնը 1550 ֆուտից աւելի է, մինչդեռ նորագոյն չափումները, որ նշանակուած են Սեւանայ լճի մանրամասն քարտէզի վրայ, ամենամեծ խորութիւնը հասցնում են 361 ֆուտի: Այն ինչ պ. Իվանովսկու խնդրանօք ուսուցիչ Սարուխանեանը չափել է Նորագուլի և Ատա-թափի հրուանդանի միջև և գտել է 455 ֆ. աւելի խորութիւն: Ընդհանրապէս կարելի է ասել, որ մինչև այժմ կատարած դիտողութիւնները ցոյց են տալիս, որ լճի հիւսիս-արևելեան մասը շատ աւելի խորն է, քան հարաւ-արևելեանը կամ հարաւայինը:

Սևանայ լճի ջուրը քաղցրահամ է և խմելու համար միանգամայն յարմար. նա այնքան մաքուր է և թափանցիկ, որ կարելի է խաղաղ ժամանակ նկատել 12—15 սաժէն խորութեան մէջ գտնուած իրերը. աւելի հաստ շերտերում նա փոփոքուած է կապտաւոյն-կանաչ գոյնով, որի պատճառով և՛ լիճը կոչուել է Գէօկչայ (կապտաւոյն գետ): Լճի մշտական ցածր ջերմութիւնը հաւասար է 4⁰: Սովորաբար միայն փետրի մօտն է սառչում, իսկ խիստ ձմեռներին նաև ամբողջովին, սակայն միայն երկու ամիս: Գարնանը և աշնանը նա շատ մթրկայոյզ է, պարբերական քամիներից ամենից աւելի փչում է հիւսիս-արևելեանը:

Սաստիկ ցուրտ ձմեռները, երբ լիճը ամբողջովին սառչում է, հետաքրքրական երևոյթ են ներկայացնում գիշերային շվիցները: Սրանք յառաջանում են սառցային ծածկոցի տակ ամբարուած գազերի, սաստիկ ցրտից տրաքուած սառցի ճեղքից մեծ ուժով դուրս ելնելիս:

Գեետը.—Նոր-Բայազետի գաւառը շատ հարուստ է լեռնային վտակներով, և գետակներով, ինչպէս և սառնորակ աղբիւրներով, որոնցից շատերը ամառը չորանում են: Սրանցից միայն մինը, Հրազդանը, սկիզբն է առնում Սևանայ լճից և թափում Արաքսի մէջ, իսկ միւսները, որոնց թիւը հասնում է 36, բխում են շրջակայ լեռներից և թափում Սևանայ լիճը:

Հոգզղան կամ Հուրասանը երբեմն կոչուած է նաև Բզնիզուր Բջնի աւանի անունով, իսկ սովորաբար անուանուած է Զանգու: Այս անունը հաւանօրէն ստացել է արաբական տիրապետութեան ժամանակ այն Զէնգի գաղթականներից, որոնք մահմեդականութեան առաջին դարում թողնելով իրենց հայրենիքը՝ Զանգեբար կամ Զանգեբարը (Աֆրիկայի արևելեան ափում), տեղափոխուել են Արարիա, և այնտեղից, գուցէ, այս գետի փքը¹⁾: Այս անունը

¹⁾ Шопень: Истор. памятникъ состояяныя Армянской области: бр. 247:

կարելի է յառաջացած լինի նաև այդ Զանգի ցեղի մի զորապետի անունից, որովհետև սրանք սովորութիւն ունէին իրենց անուան աւելացնել Զանգի խօսքը:

Զանգուն սիրզբն է անուն Սեանայ լճից Ելենովկա գիւղի մօտ մի փոքրիկ վտակով, որ շուտով կորչում է ճահճային հովտում: Յետոյ Գոմաձոր գիւղի մօտ այս հովտի մէջ թափում է մօտակայ յորդ աղբիւրի ջուրը, և Զանգուն նորից երևում է իւրև մի գետակ: Նրա ջրի քանակութիւնը այս մասում կախուած է քամիներից, որոնք մղում են լճից ջուրը, ինչպէս և լճի ջրի մակերևոյթի փոփոխութիւնից:

Ուղղուելով դէպի արևմուտք, Զանգուն կազմում է մի փոքրիկ ջրընկէց, իսկ Ռնդամալ գիւղի մօտ միանում է Միսխանա կամ Միսխան-չայի և կամ պղնձահանքի ջրի հետ, որ իւր վերին մասում կոչւում է Սոխլ-բուլաղ: Այստեղից Զանգուն հոսում է դէպի հարաւ և Ներքին Ախտա գիւղի մօտ սկսում է խորանալ ահագին փոսի մէջ, որ ինքը բացել է մարած խանձողի կոյտի մէջ:

Աւելի և աւելի խորանալով այս փոսի մէջ՝ նա կտրում է թուխ արսիդիանի (վանակատ, սատանի եղունգ) կարծր շերտը: Այստեղ մօտ երկու վերստ տարածութեամբ նա հոսում է ապականման ափերի միջով. որոնք տեղ տեղ մինչև 700 ոտնաչափ բարձրութիւն ունեն, և որոնք ցուացնելով իրենց վրայ ընկած արևի ճառագայթները՝ խտացնում են նայողի աչքերը:

Զանգուն թափում է Արաքսի մէջ Սարաջալար գիւղի մօտ: Նրա երկարութիւնն է 97 վերստ, որից 40 վ. Նոր-Բայազէտի գաւառումն է, 8 վերստը սրա և Էջմիածնի սահմանագծում, մընացածը Էջմիածնի և Երևանի գաւառներում: Նրա թեքութիւնը իւրաքանչիւր վերստի վրայ հասնում է վերին հոսանքում 32 ոտնաչափի, միջինում 54, իսկ ստորինում 10-ի: Խորութիւնը լինում է մի արշին և աւելի. լայնութիւնը մինչև 10 սաժէն:

Սեանայ լիճը թափուող գետակներից նշանաւոր են. հիւսիսային կողմում Պալղ-չայ կամ Չուբուխլու, սիրզբն է անուն այն զոգաւորութիւնից, որ կազմում է Փամբակու լեռնաշղթայի և նրա ճիւղ Կեչաշկոտի միջև, բերանը գտնւում է Չիբուխլու գիւղի հարաւային կողմը: Երկարութիւնը 18 վերստ է: Հաւանօրէն սա հին ձապոսիկ գետն է, և այժմեան Չիպուխլու անունը՝ սրա աղաւաղութիւնը: Արևմտեան և արևմտահարաւային կողմերից. Բաւառ-չայ կամ Գաւառագետ, որի սկունքները գտնւում են Ահմանկանի լեռնաշղթայի Աղ-դաղ և Ղըզըլ-դաղ զագաթների միջև, բերանը Նորազուգ գիւղի մօտ, Շօրգեօլ հրուանդանի ա-

ուջ: Անցնում է նոր-Բայազէտի հին քաղաքամասի միջով, ուր կայ մի քարէ կամուրջ: Երկարութիւնն է 33 վերստ: Սրա մէջ թափւում են Ղուլալի և Դալի-ղարդաւ ժտակները: Երանոսի-չայ կամ Ձագայ գետակ, Աղամխանի-չայ, Վալի-Աղալուի կամ Շիրին-չայ և կամ Շողագայ-գետակ, Մակ-Բարի ջուր, Թագա-Բեղի կամ Նորաշենի և կամ Կողայ կամ Կողակայ գետակ, որ իւր անունն ստացել է համանուն ձկներից և որ իջնում է Արդլահ-սարից: Գեոլ-չայ կամ Եղնոցիս և կամ Եզնոցիս գետակ, որի լայնութիւնը ու հոսանքի հանդարտութիւնը նրան փոքրիկ լճակի տեսք են տալիս: Հարաւային կողմից՝ Ասի-Երանոց-չայ կամ Կորայ գետ և կամ Իօխանագետ, որ կազմւում է Մեծ, Փոքր և Հիւսիսային Այրի-չայից, որոնցից առաջինը սկիզբն է առնում Ահմանկան լեռնաշղթայի, Հարաւային Գողչայի լեռնաշղթայի միացման տեղում, երկրորդը այս վերջինից, առաջինից փոքր ինչ արևելք, և երրորդը՝ Ահմանկան լեռնաշղթայի Արխաշան և Դաւա-գետից գաղաթների միջից: Բերանը գտնւում է Ներքին Ատի-Երանոց գիւղի մօտ: Երկարութիւնը 33 վերստ է: Ղարանլը կամ Կզնուցների գետակ, Թուխսուլու կամ Վարդենոց գետակ, Գիւզալ-ղարայի-չայ կամ Գոլասակու գետակ, Ալիչալուի-չայ կամ Կոքիկ գետակ և կամ Կրանոց, որ հոսում է Վանաձանուց ձորակով, Գեօսակ-բուլաղ կամ Կարն-աղբիւր, որ միայն մի սածէն երկարութիւն ունի, Ղրզըլ-վանք-չայ կամ Եւրփուլլու և կամ Մաքինոցոց գետակ, որ 35 վերստ երկարութիւն ունի և Սեանայ լիճը թափուող գետերի մէջ ամենաերկարն է համարւում: Հարաւ-արևելեան կողմից՝ Սոլ կամ Ջոլ և կամ Մագրու գետակը, որ կազմւում է բաւականաչայի վըտակներից՝ ինչպէս՝ Ձալսրլու կամ Ղրզըլ-բուլաղ և կամ Կարմիր աղբիւր, Ղրխ-բուլախ կամ Կալեու ջուր, Ղոտա-բուլախ կամ Վասակաեքի ջուր, Բէքի-չայ, Դամուր բուլախ կամ Արաւասի գետակ, և այն: Սրանք բոլորն էլ սկիզբն են առնում Բէթի-դաղ լեռից և հոսելով Մազրի դաշտաձայրով՝ թափւում են Գիլի լճակի մէջ: Արևելեան և հիւսիս արևելեան կողմից՝ Շիղայա, Երնիուր կամ Շամիուր և կամ Շեփոյաս, ձի, Արաւուն, Աղ-բուլաղ, կամ Դեթիկ, Թոլլունա կամ Դրախիկ, Գիւնէ կամ Արեգունոյ:

Երկրաբանական տեսակէտից այս գաւառը դեռ լաւ ուսումնասիրուած չէ, սակայն միանգամայն պարզ է, որ սա հանգած հրաբուլդիների և քառասկան անկարգութեամբ սփռուած խանձողի ահագին կոյտերի¹⁾ մի երկիր է:

1) Մանաւանդ Օրդակլուի շրջակայքում, Սեանայ լճի արևմտա-հիւսիսային ափում:

Այստեղ լճի հարաւ-արեւմտեան ափի երկարութեամբ ձրգուում են հրաբլխային հանգած լեռներ, իսկ մի քիչ հեռու բարձրանում են Ահմանկան լեռնաշղթայի ամենաբարձր կոնաձև գագաթները, որոնցից զրեթէ ամեն մինն ունի հրաբլխային բերան, դատարկ, կամ ջրով լի, կազմելով մի փոքրիկ լճակ: Ենթադրուած է, որ Սեանայ լիճն էլ հրաբլխից է յառաջացել, սակայն դեռ ևս պարզուած չէ թէ ինչպէս:

Հ Ա Ն Ք Ե Ր

Արծաթա-արհիճային հանք.—Նկատելի է նախկին պղնձահանքի գործարանից 15 վերստ հարաւ-արեւմուտք:

Պղնձահանք.—Բաշ-Ապարան գիւղից 10 վերստ դէպի հիւսիս-արեւելք, Միսխանայ գետը ձախ կողմից թափուող փոքրիկ վտակի ափին: Այստեղից 225 սաժէն դէպի հարաւ-արեւմուտք գտնուած էր պղնձահալախան գործարանը:

Պղինձ գտնուած է նաև Մայմէղ լիւրան (10,170⁰) ստորոտում Մահմուսլի-իւրտ կոչուած տեղում. Դիլլաջի հովտում:

Նեկաքանակ.—Միսխանէ պղնձահալախան գործարանից 2¹/₂ վ. հիւսիս-արեւմուտք, դէպի Ապարանի դաշտը տանող ճանապարհի շուրջը:

ՏորՖ.—Աղղաղ լիւրան հարաւային լանջին, ինչպէս նաև Միսխանայի հովտում՝ Փաշաքենդ գիւղի մօտ, և Նոր-Բայազետ քաղաքի շրջակայքում:

Մարմարոն.—Միսխանայի պղնձահանքից փոքր ինչ ներքև, Միսխանայ գետի աջ կողմի վտակի ձախ ափին:

Կրաքար.—Կարավան-սարայ գիւղի մօտ, (Ախտայից դէպի Դարաչիչակ տանող ճանապարհին): Միսխանայի հովտում, Կոնստանտինովկա գիւղից 6 վերստ հեռու:

Դարաչիչակ ամարանոցից 2 վերստ հեռու, Մակրավանք գիւղի մօտ:

Բասալտ.—Սեանայ լճի հիւսիս-արեւմտեան ծայրի մօտ և Ելենովկայից հարաւ, նոյն լճի ափին:

Տրափի եւ տրափիտ խուցձող եւ տւՖ. (трапизитъ и трапизитовые: лава и туфъ).—Սեանայ լճի արեւմտեան ափին:

Վանակաւտ կամ օքսիդիաքար.—Միչաննի (Բող-գաղ) լիւրան վրայ, որ գտնուած է Սեանայ լճից 10 վերստ դէպի արեւմուտք: Դաւազեօղ—լիւրան լանջերին:

էյլար և Սուխոյ-Ֆանտան կայարանների միջև, Նովո-Նի-կոլսեզկա գիւղի մօտ:

Սուխոյ-Ֆանտանից 3-5 վերստ հարաւ, Մեծ և Փոքր Քեօթանդազ լեռների վրայ:

Սուխոյ-Ֆանտանի մօտ, Զանգու գետի ափերում, բաւական հաստ:

Շախիօլ (8299') լեռան վրայ, Սուխոյ-Ֆանտանից 20 վերստ հիւսիս-արեւմուտք:

Օրթըլու լեռան վրայ, 8-9 վերստ հիւսիս-արեւմուտք վերոյիշեալ լեռանից:

Հ Ա Ն Ք Ա Յ Ի Ն Ջ Ր Ե Ր


Կրային սառն աղբիւրներ կան. 1) Հրազդան գետի աջ ափին, Նոր-Բայազէտ քաղաքից 46 վերստ հեռու, 40°3' հիւսիսային լայնութեան և 62°40' արևելեան երկարութեան տակ, 2). Միսխանայի հովտում, Միսխանա-գետի մօտ, 3) փոքր ինչ ներքև, Դարաչիչակ — գետակի ափին, նախկին պղնձահալական գործարանի մօտ և 4). Նոր-Բայազէտ քաղաքից 15 վերստ հարաւ-արեւմուտք և 11 վերստ նոյն ուղղութեամբ Դալի-Ղարդաշ գիւղից, Արփա-գեօլից բղիտղ մի գետակի վրայ, որ յայտնի է Քեչի-գեաղուկի Շոր-Բուլաղ անունով: Ջերմութիւնը 8°—10° Բ.

Ածխաքար—երկաքային (Углекисло—железистый) աղբիւրներ գտնուում են 1). Հրազդանի ձախ ափին, Գիւմուշ գիւղից փոքր ինչ ցած, և յայտնի է Ղոթուր անունով:

Մծմբային սառն աղբիւր կայ Ելենոզկա գիւղից 2¹/₂ վ. հեռու, Սևանայ լճի ափին, Հրազդանի ակունքի մօտ, 40°31' հիւսիսային լայնութեան և 62°42' արևելեան երկարութեան տակ:

Կ Լ Ի Մ Ա Ն

Նոր-Բայազէտի ամբողջ գաւառում միայն երկու տեղ հաստատուած է օդերևոյթարանական կայարան, Նոր-Բայազէտ քաղաքում և Ելենոզկա գիւղում: Ի նկատ առնելով, որ այս երկու կայարանների գիտողութիւնների արդիւնքը միմեանցից չափազանց քիչ են տարբերուում, մենք շատանում ենք առաջ բերելով միայն Նոր-Բայազէտի կայարանի գիտողութիւնների աղիւսակները: Սրանցով մօտաւորապէս որոշուում է գաւառի հարաւ-արև-



Ս
Ե
Ի
Ա
Ն
Ա
Յ
Վ
Ա
Ն
Ֆ

մտեան մասի կլիման, մինչդեռ հիւսիս-արևմտեան մասը, որ ներկայացնում է մի լեռնաշղթայի արևելահայեաց լանջ և այս պատճառով միանգամայն տարբերում է իւր կլիմայով, քան է բոլորովին անորոշ, որովհետև այս կողմերում դեռ ևս չկայ և ոչ մի օդերևոյթարանական կայարան: Այս պատճառով և կարող ենք միայն մօտաւորապէս ասել, որ այս կողմերում ձմեռը շատ կարճատև և տաք է լինում, ձիւնը շուտով հալում է, որի շնորհիւ և տաւաքը կարողանում է ամբողջ տարին արածել: Ամառը բաւական շոգ է լինում և օդը շոք:

Տարիներ	Բարոճար			Ջ Է Ը Մ Ո Ն Թ Ի Լ Ն									Բացարձակ խոնավություն			Յարաբերակ. խոնավություն			Աճական		
	Միջին	Մագսիմ.	Միջինում	7	1	9	Միջին	Մագսիմ.	Աճաթի և ամիս	Բացարձ. միջինում	Աճաթի և ամիս	Միջին միջինում	7	1	9	7.	1	9	7	1	9
1901	608.6	611.2	501.4	3.6	11.5	4.6	6.6	29.3	24/VIII	30.0	28/I	0.0	5.0	4.9	5.2	76	48	75	4.6	4.8	3.6
1902	603.1	610.5	588.5	2.9	10.5	3.6	5.7	27.1	29 VII	—	—	—	5.1	5.0	5.3	78	50	78	5.1	5.7	4.5
1903	601.1	610.9	591.5	1.7	10.0	2.6	4.8	27.7	22/IX	22.5	/I	2.4	—	—	—	—	—	—	4.6	5.3	3.8
1901	603.8	618.6	590.2	2.0	9.2	2.6	4.6	25.9	21/VI	27.2	20/I	1.8	5.2	6.2	5.3	82	61	81	5.9	5.9	5.0
1905	604.4	611.8	590.9	1.7	9.8	1.2	4.2	27.7	16/VII	31.3	28/I	2.3	5.2	6.5	4.8	81	63	81	5.3	5.5	4.6
Գում.	190	—	—	11.9	51.0	14.6	25.9	—	—	—	—	-6.5	20.5	22.6	20.6	317	225	315	25.5	27.2	21.5
Միջին թիվ	603.8	113.6	588.5	2.4	10.2	2.9	5.2	19.3	--	31.3	—	-1.6	5.1	5.6	5.2	79	56	79	5.1	5.4	4.8

Տարիներ	Պամու արագություն			Ք ւ մ ժ ի ն կ ր								Հ ա մ ր ա ր ա ռ .	Ն ա ա ո լ ց ք				Օ ր կ ր									
	7	1.	9.	N.	NE.	E.	ES.	S.	SW.	W.	NW.		Փ ա ռ լ ա թ .	Մ ա գ ա թ լ ա մ .	Ա մ լ ա թ լ ա կ ա մ թ ա	Ն ա ա ո լ ց ք	Ձ ի ռ	Կ ա թ լ ա ա	Մ ա թ լ կ ժ ժ թ լ թ լ կ լ ա ա .	Փ ա թ լ թ լ կ լ ա ա .	Փ ա թ լ ա ա լ ա մ .	Փ ա թ լ ա ա թ լ թ լ	Ա մ լ ա մ ա մ	Ց ա ռ թ ա	Ս ա թ ն ա մ ա մ լ թ թ	Մ թ լ կ
	1901	0.8	1.8	0.6	29	77	33	20	33	25	190		17	751	—	—	—	—	0	2	1	0	78	59	5	172
1902	0.7	1.9	0.7	67	87	26	23	39	47	90	10	684	28.0	35.0	14/V	78	32	3	0	2	36	55	41	—	10	
1903	0.5	1.4	0.3	22	86	21	11	15	32	67	27	793	183.8	29.5	27/VI	113	37	4	26	5	5	68	40	81	185	7
1904	0.7	1.4	0.4	70	39	10	16	28	43	43	21	824	612.4	49.5	25/X	*129	*43	2	13	2	4	39	73	61	185	4
1905	0.5	1.4	0.4	72	8	8	11	14	27	62	25	864	199.4	33.1	7/VIII	119	48	1	29	4	8	59	62	90	188	4
Փ ա մ .	5.2	7.9	2.4	250	288	98	84	129	171	372	110	5916	1953.6	—	—	439	160	10	70	12	19	280	286	309	730	33
Մ թ լ թ լ	0.6	1.6	0.5	52	58	20	17	26	35	71	22	784	188.4	18.5	—	110	40	2	14	2	4	55	57	62	182	7

ՆՈՐ-ԱՅԵՐԳԻՏ ԳԱՆԱՌ

Կ Ե Ն Դ Ա Ն Ի Ն Ե Ր

Սեանայ լճի և գետերի մէջ լինում են տեղացիների ասելով 12 տեսակ ձկներ, որոնց գիտնականները բաժանում են հինգ տեսակի. սրանք էլ պատկանում են երկու ընտանիքի, երեքը՝ սաղմոնի (лососевыхъ, salmonidae) և երկուսը՝ կիպրինակերպների (карповыхъ, cyprinoidae): Առաջին ընտանիքին պատկանում են. 1) *Рижа* ոկր—արուն, էգը և իշխանը—այն, որ այդ տարին ձգկնիթ չի ածում և այն, որ դեռ ևս չէ սկսել ընդունել ամուսնական երգին (*salmo ischchan kessl*): Այս երեքն էլ կաղմում են միևնոյն տեսակը, թէպէտև տարբերում են միմեանցից թէ արտաքին տեսքով և թէ ներքին կազմութեամբ, 2) Բոզակը (*salmo species nova*) և 3) գեղարձնիկ (*salmo gegarkuni kessl*) որի տեսակներն են նաև կեռակսուց, աղիզակ, ամսը, ծուսը, լալալսածուկ կամ չալածուկ¹⁾:

Կիպրինակերպների ընտանիքին պատկանում են միւս երկու տեսակը. 1) Կոպակ (*храмуля, capoeta sevangi fil*), և բեղլու (*уцачь, barbus goktshaicus kessl*.) որ աւելի առատութեամբ լինում է Ատի-համան գետում²⁾:

Օվերինը ասում է, թէ Սեանայ լճում կայ նաև օձածուկ, (*Anguilla fluviatilis Heckel, угорь*) և աւելացնում է, թէ սրան հայերը անուանում են զրի օձ, և չեն գործածում: Իսկ Կեսերի կարծիքով սա Կասպիական քարալէզ (*минога, Petromyzon vagneri kessl*) պիտի լինի, որը Չանգու գետով անցնում է Սեանայ լիճը և որը մի քանի տեղ օձածուկ կամ ջրի օձ է կոչւում և չի ուտում:

Սեանայ լիճը պետութեան կողմից կապալով է տրւում զանազան անձերի, որոնք իրենց կողմից աւելի մանր մասերով կապալով են տալիս ծովափնեայ գիւղերի բնակիչներին: Երեք տարին մի անգամ մի ամբողջ տարով արգելւում է ձուկ որսալ լճից ծախելու համար, որպէսզի սաստիկ չպակասի սրանց քանակը, թէպէտև արդէն վաղուց անցել է այն ժամանակը, երբ կուժը ջուր լցնելիս էլ ձկները թափւում էին մէջը:

Այս սխտեմի անյարմարութիւնն էլ արդէն զգացուած է, և

¹⁾ Մանրամասն նկարագրութիւնը լուսատիպ պատկերներով կարելի է տեսնել Կովկասեան Թանգարանի հրատարակած «Лососевыя (Salmonidae) Кавказа Ө. Каврайскаго» աշխատութեան մէջ:

²⁾ Մանրամասն նկարագրութիւնը կարելի է տեսնել նոյն Թանգարանի հրատարակած Карповыя (Cyprinoidae) Кавказа С Каменскаго Тифлисъ 1899 և 1901 թ. աշխատութիւնների մէջ:

ապառոււմ է, որ կառավարութիւնը փոխանակ այդ ձևով՝ ամեն տարի անձան ամիսներին որսալու արգելք դնէ:

Բացի ձկներից լճի մէջ վխտում են փոքրիկ խեցգետիններ (gammaridae), որոնք կաղմուս են իշխանաձկի գլխաւոր ուտեստը, դեռ ևս սրա միայն երկու տեսակներն են գտնուած *G. pullex* L. և *G. sibiricus*. Զանգու գետում պատահում են կարճազի խեցգետիններ (*Thelphusa ibera* güld), բայց դրանք լիճը չեն մտնում, երկարազի խեցգետիններ (*Astacus*) դեռ ևս չեն գտնուել ոչ Զանգու գետի, ոչ էլ լճի մէջ: Սարգանման կենդանիներից պատահում են կարծիներ, ինչպէս սովորականները (*Androctonus ornatus* Nordm.) այնպէս և սևերը՝ (*Androctonus bicolor* Ehrenb.) Գտնահում են նաև, քիչ քանակութեամբ, փաղանգներ, որոնք կարծես պատկանում են միայն մի, *Solpuga araneoides* Latr. տեսակին և փաղիժներ, (тарантулы, *Lycosa singoriensis* Laxm.) Սևանայ լճում կան նաև մեծ քանակութեամբ ջրային խիռնջներ, որոնք պատկանում են *Lymnaeus stagnalis* L. *L. Ovatus* Drap. *L. auricularius* Drap. և *Planorbis carinatus* Müll. տեսակներին: Սրանց մէջ գերակշռում են *L. stagnalis* և *Pl. carinatus* տեսակները, որոնց պրոֆ. Կեսլերը հանել է 100, իսկ պրոֆ. Բրանդը մինչև անգամ 238 ոտնաչափ խորութիւնից: Սևանայ լճի խիռնջները նրանով են տարբերւում, որ նրանց վրայի խեցիները չափազանց բարակ են: Տղրուկների ընտանիքից գտնուած են հինգ տեսակներ՝ այն է. *Nepheleis octoculata* Bergm. *Aulastoma gulo* Braun (*Haemopsis vorax* fil) և երեք տեսակ *Clepsine*—սեւից, այն է. *ch. orientalis* (երկաշեան տեսակը). *ch. goktshaica* (գեցաշեան) և *ch. Leuckarti*. (ութաշեան): Զանազան մանրադիտական խեցգետիններով (рачкы) և այլ ստորնակարգ կենդանիներով աւելի հարուստ են լճի սակաւջուր ծոցերը, ինչպէս, օր. *ելնովկայինը*, և սրանք անում են *Myriophyllum spicatum* L. և *Potamogeton perfoliatus* L. ջրային խոտերով և *Enferomorpha intestinalis* Link ջրի մոտով: Մեծ քանակութեամբ պատահում են ջրային գորտեր (*Rana esculenta* L. և *Rana axyrhina* steenstr.) և գոգոշներ (жаба, *Bufo viridis* Laur) բազմաթիւ են նաև սովորական խեցի. (ужы, *Tropidonotus natrix* var. *persica*) և սողուններ (*Vipera berus* L.)

Կաթնասուններից Նոր-Բայազէտի գաւառում պատահում են արջեր (*Ursus arctos*), եղջերու, (*cervus elaphus* L.) բազմաթիւ նապաստակներ (*Lepus variabilis*), գայլեր, աղուէսներ: Այս վերջինները պ. Բազդէի ասելով և պրոֆ. Բրանդի հաստատութեամբ, բոլորն էլ պատկանում են *vulpes melanotus* Pall. տեսակին, իսկ իսկական, եւրոպական աղուէսներ, *vulpes vulgaris* gray բոլորո-

վին չկան Անդրկովկասում: Սևանայ լճի ափերին պատահում են ջրադուէտի հետքեր: Սակայն այս բոլորից ամենաբազմաթիւ և ամենաքիսասակարբ դաշտամուկն է (*Arvicola socialis*), որ մեծ տարածութեան ցանքսեր է փչացնում:

Թռչուններից կան թէ բարձրարուններ, թէ ջրայիններ, անհամեմատ աւելի Սևանայ լճի հարաւային կողմում, ուր շատ շամբեր և եղեգնուտներ կան, քան հիւսիսային ժայռոտ ափին: Այստեղ մեծ քանակութեամբ գտնուում են սողեր, բաղեր, մանաւանդ ճարնային (*Fuliga fusca* L.) և յայտարդէա (*Casarca rutila* Pall.) տեսակները. ամբողջ խմբերով լողում են սև փարփարներ¹⁾ (*Лысуха, Fulicula atra* L.) բազմաթիւ ջրսոյզ բաղեր (*Podiceps*), ձկնկուլներ (*Чайка, Lagus*), որոնք բաւական մեծ քանակով պատճառում ձկնորսութեան, ուստի և Ելենովկայի ձկնորսներն անողորմաբար փչացնում են նրանց բներն ու ձուերը: Քարքարոտ կղզեակների վրայ և ծանծաղուտ տեղերում շարունակ նստում են հաւալոււմներ (*Pelecanus crispus* Bruch և ջրուզոււմներ (*Carbo comariganus* Meyer), հաւալոււմները ձմեռնամառին բոլորովին թողնում են Սևանայ լիճը, մինչդեռ ջրագոււմները մնում են այստեղ և՛ ձմեռելու, լճի հարթ ափերը կենդանանում են բազմաթիւ և բազմազան կտցարներով, որոնց մէջ նկատելի են՝ ծովային *Aegialites cantianus* Lath-ը (*Зуек*), *Aegialites hiaticula* L. (*галстушник*), *Եղախրիկը* (*пигалица, vanellus cristatus* Meyer), մեծ և կարմրատու *Totanus glottis* L. և *T. calidris* L. (*улит*), *արինգա*, *Tringa cinclus* L. (*востровый песочник*), *կտցար* (*skolopax gallinago* L.) և *recurvirostra avocetta* L. (*Иглоклюва*): Աւազոտ տեղերում միշտ կարելի է տեսնել մոխրագոյն արազիլ (*Ardea cinerea*. *сбрая цапля*). Ճահճոտ տեղերում կան շատ լորսամարդիներ (*Coturnix communis* Bonap. *корогел*), լճի ափերին թռչկոտում են զանազան բազէներ (*соболев-кочев*), առաւելապէս *Falco tinnunculus* և *F. cenchris* տեսակներից, (*Saxicola rubetra* L. *зубовой чекканчк*, *Saxicola oenanthe* L. *чекканч-позутик*), կարմրատուտ (*Lusciola phoenicurus* L. *горихвостка*), զանազան ցախատրեկներ (*Phyllopusneuste* *пичочки*) առաւելապէս *Ph. Eversmanni*

¹⁾ Տեղացիները չեն ուտում փարփարների միսը, ուստի և չեն որսում, այս պատճառով և այս թռչունները ամենայն վրստահութեամբ լողում են լճի ափերին մօտիկ, և նոյն իսկ մօտեցում նաւակներին: Հետաքրքրական է տեսնել, թէ ինչպէս փարփարները, նկատելով մի որևէ նաւակի մօտենալը, շտապում են ծածկել իրենց բները ցախով ու խոտով, որպէսզի թաղցնեն ձուերը. և յետոյ հանգիստ լողում են նոյն իսկ նաւակի մօտ:

Bonap (Ph. icterina Eversm) Ph. rufa Lath. & Ph. trochilus L. տե-
տակները *Саламогерпе arundinacea* Lath. Камышевка), շինական և ըն-
տանի ծիծառ (ласточка-косатка и ласточка-стрижошь, *Hirundo rus-
tica* & *H. urbica* L.) սպիտակ խաղտտնիկներ (Бѣлая трясогъзка, *Mota-
tilla alba* L.) զանազան արտոյաններ, մանուածղ մարգերի ար-
տոյաններ (*Alauda arvensis* L.) ինչպէս և կատարաւորներ (*A. cris-
tata*, хохлатый) և դաշտայիններ (*A. calandra* L. степной), կանեփա-
կեր ճնճղուկ (*Fringilla cannabina* L.) սարեակների *Sturnus vulgaris*
L.) աճաղին երամներ, ընտանի ճնճղուկներ, (*Passer domesticus* L.)
Երբեմնապէս պատահում են մոխրագոյն ագաւաններ (*corvus cornix*
L. сѣрая ворона) և կաշաղակներ (*Pica caudata* L.), Կոռնկներ
երևում են միայն անցնելիս: Նոր-Բայազէտ քաղաքը զալիս են
ամեն տարի բուն շինելու մի քանի զոյգ սպիտակ արագիւններ
(*Ciconia alba* L.): Գր-Ֆիլիպպին իւր ճանապարհորդութեան ժա-
մանակ Նլենովկայի շրջակայքում նկատել է նաև *Pandion haliaëtus*
L., *Motacilla flava* L. (*melanocephala*) և սև արագիւ (*ciconia*
nigra)¹⁾

Բ Ո Ւ Ս Ա Կ Ա Ն Ո Ւ Ք Ի Ի Ն

Գարնանը, մայիսի սկզբին, լեռների հարաւային լան-
ջերին բուսնում են հետեւեալ մանրիկ, միամեայ բոյսերը,
որոնց կարելի է նկատել միայն գետնին կոանալով. գար-
նանային դրաք, (թուրք կոտեմ—*Draba verna*), խոպո-
պուտր խաճեն (*крупка весенные. Helleborus umbellatum*);
սուգամբար (*Sisymbrium nudum*), ծիրանեզոյն եղնճմայր
(*Lamium purpureum*), եղջիւրախոտ (*Cerathocephalus*
orthoceras), համեմատաբար աւելի մեծ են կոտեմ (*Lepi-
dium perforatum*) տակ (*Alyssum desertorum*), *gagea*,
gemma վայրի տորոն (*galium vernum*); սիբելս (*Scorzonera*);
frillaria tulipoides; կակաչ (*Tulipa Gessneriana* (սչ ամեն
տեղ): անանուխիկ (*Poa bulbosa*). կովկասեան շուշան,
(*iris caucasica*), *Ajuga orientalis* և ուրիշներ:

Տարուայ շոգ ժամանակը լեռների հարաւային լանջե-
րին յատուկ այս բոյսերն աւելի նոսր են լինում, այնպէս
որ երբէք ճիւղ չեն կազմում և մի առանձնայատուկ, խի-

¹⁾ Иваноскии; озеро Гокча. Այս մասը կազմուած է Բերրի,
Կեսալերի, Գանիլակու և Բրանդաի ուսումնասիրութիւնների
հիման վրայ:

ժախտոն հոտ ունին՝ շրթնագոյներէ, մանաւանդ ուրցի (Thymus serpyllum), օշինդրի և Pyrethrum-ի առատութեան պատճառով և բուսական դաշտանկարը ստանում է մոխրագոյն—սպիտակաւոյն երանգ. սրանց ներկայացուցիչներն են. եղածաղիկ (Ranunculus illyricus), ճակնդեղ (Alyssum alpestre, campestre, linifolium); սխառամայր (Erysimum ibericum), մեխակներ (Dianthus Liboschitzianus, D. capitatus, D. campestris), սուսամբարներ (Silene longiflora. S. repens), համասփիւռ (Melandryum pratense), Arenaria graminifolia, խնկածաղիկ (Hypericum hyssopifolium. H. repens), երնջակ կամ փուշտոտ (Eringium campestre), ստեպղին (Daucus pulcherrimus), Onobrichis vaginalis (Эспарцетъ) O. viciaefolia. աուռյա (Medicago sativa), Vicia persica, զանգածաղիկ (Campanula sibirica C. Steveni), սորա տեսակից՝ Centauea sessilis Willd; այծամօրուք (Tragopogon floccosus), օշինդր (Artemisia absinthium), Pyrethrum achilleaeefolium և սրա պարագիւտ՝ Anoplanthus Biebersteinii, բերիկիկ (Veronica orientalis), Onosma sp., Onosma sericea, Echium rubrum, Cerinthe maculata, Cyphomttia lanata, ծեթրոն, Thymus serpyllum), Ziziphora vulgaris, օշինդր (Teucrium orientale, T. chamaedrys, polium), գառնագամակ (Ajuga chia), սըղանգն (Scutellaria orientalis. шлемникъ), վայրի դաղձ (Nepeta Moussini, nuda), մոշայ (Stachis recta) և այլն:

Ամառուայ կիսին այստեղ բաց է անում իր հովանին Prangus ferulacea, այս բոյսը շատ բնորոշ է այս տեղի համար. գարնանը նրա նորարոդող ընծիւղները, որոնք դուրս են յղուում գեանից ջայլամի փետուրների նման, մի քանի տեղ ամբողջովին ծածկում են ժայռերի լերկ լանջերը: Այստեղ երբեմն նկատուում է քիչ քանակութեամբ մարեհի և ասպիրակ (таволга).

Տեղ-տեղ լերան լանջը ժայռոտ լինելով, կամ քարակոյաներ է կազմում, կամ ուղղաձիգ կտրտուելով երևան է հանում լերան խկական երկրաբանական կազմութիւնը, ինչպէս, օրինակ, Զանգու գետի բազալտային ափերը, Կախի գիւղից ներքև: Այսպիսի տեղերում նկատուում է տեղական պայմանների յարմարուած բուսական ինքնուրոյն կազմութիւն, որի սակաւաթիւ ներկայացուցիչները ապաստանում են ժայռերի ճեղքուածների մէջ գտնուած փոփուկ հողում: Այսպիսի տեղերում գարնանը բուսնում են

սպիտակաշուրթ կոսմիտուկ (*Arabis albida*), մանուշակ (*Viola persicifolia*), խոտ խոտ (*Scrophularia chrysantha*), և *Scrophularia variegata*, իսկ ամառը՝ գեղեցիկ փնջերով ձերպերից ժայթբաժ զանգակաժաղիկներ (*Campanula*) և մեխակներ (*Dianthus fragrans*), զառնադամկիկներ կամ փերփեր տանեաց (*Sedum album acre, pilosum, gracile*).

Բացի դրանից այսպիսի ժայռոտ տեղերը շրջապատուած են լինում թփուտներով, առաւելապէս վայրի վարդենու և ասպիրակի, որոնք բուսնում են նաև ժայռերի ձերպերում: Այս տեսակի թփերը, որոնք շրջապատում են ժայռերը, տարածուած են և բնորոշ են Ահմանկանի լեռնաշղթայի լանջերին: Սըանցից ամենից բնորոշ է *Epilobium angustifolium* կատուախոտը (*Valeriana alliarifolia*), *Dictamnus Fraxinella*, *Rhynchoscoris orientalis*, *Bupleurum falcatum*, *Astragalus cicer*, *Astragalus corniculatus* և այլն:

Վերոյիշեալ բոլոր կազմութիւնները, այսինքն 1) լեռների հարաւային լանջերի կայտ դաշտախայրերի 2) խաղիւանի (*Эстрагалъ*) փշոտ քիւերի և 3) ժայռերի և սրան ենթարկուող քիւտների կազմութիւնները տեղի ունեն նաև Գիւնէյի լճափում, միայն այստեղ բացի այդ կազմութիւնների համարեա բոլոր ներկայացուցիչներից՝ նկատուած են նաև ուրիշ տեսակներ, որոնք գաւառի միւս մասերում չկան կամ շատ հազիւ են պատահում: Այսպէս են օր. սխտորամայր, *Erysimum Szowitzianum* Boiss), եղածաղիկ (*Ranunculus oxyspermus*), *Hyppomarathrum crispum* Koch, *Aetionema (iberidella) sagittatum*, յորասերմ (*Stacnys lavandulaefolia* նոր տնտակի), *Bungea trifida*, մկնամրգի (*Hedysarum daghestanicum*), *Coluteocarpus reticulatus*, *Thesium ramosum* Hayne. մարդմարտ (*Asperulum* Alph.), *Atraphaxis buxifolia*, հոսի (*Astragalus* sp. nova), և ուրիշներ: Այս տեսակները խառնուելով վերոյիշեալ կազմութիւնների ներկայացուցիչների հետ, բնորոշ տեսք են տալիս Գիւնէյի լճափի բուսականութեան, տարբերելով նրան միւսներից:

Անտառապատ ձորերին, — որոնց մասին խօսելու ենք յետոյ, — հետևում են մի շարք կոսմաններ, այսինքն ընդարձակ գետնափոր խուղերի խմբեր, որոնք ամառը բարձի թող են առնուում, իսկ ձմեռը, իբր գիշերային ա-

պատան են ծառայում ոչխարների հօտերին, որ տարուայ այդ ժամանակ բերում են այդտեղ արածեցնելու:

Այս խուղերի շուրջը բուսնում են սովորական *Asperugo procumbens*, կոտեմ (*Lepidium draba*) և *Gapsella Bursa Pastoris*:

Գիւնէյի լեռնաշղթայի այն մասը, որ տեղ տեղ համարեա ուղղաձիգ իջնում է լճի մէջ և մեծ մասամբ ծածկուած է ժայռերով ու քարակոյտերով, պատած է կարմիր-ժանգագոյն և կանաչ-մոխրաւոյն մամուլ: Այս քարափների կատարները զարդարուած են բողկի տակով, (*Pyrethrum parthenium*), իսկ նրանց շուրջը և մէջէմէջ սխմոււմ են վայրի վաղենին. ասպիրակը, կծոխուրը և այլն: Կան նաև շիկատակ (*Atraphaxis buxifolia*), իսկ խոտային տեսակներից՝ ձարխոս (*Stipa Szovitziana*), որ բուսնում է ժայռերի փոսիկները մէջ լցուած սևահողի բարակ շերտերում, *Silene saxatilis*-ի և *Pyrethrum achilleaeifolium*-ի հետ: Յետոյ *Ephedra* sp., որ սակայն, աւելի դերագասում է բուսնել ժայռերի կաւոտ - աւազային լանջերի վրայ, և վերջապէս ցրտենին, որ ժայռերի ճեղքուածների մէջ է ուղղում իւր արմատները: Այս վերջինն ամենաքնորոշ բոյսն է Գիւնէյի լեռնաշղթայի համար: Նրա ծառերը ցրուած և տարածուած են ամբողջ հիւսիս-արևելեան լճափին, և միայն Աղաթափա մեծ թերակղզու վրայ այնքան խտանում են, որ կազմում են ցրտենու մի ամբողջ անտառ, մօտաւորապէս 25 վերստ տարածութեամբ, Ջիլ և Սատանախաչ գիւղերի միջև: Այստեղ բուսնում են ցրտենիի երեք տեսակներ. *Juniperus* sp., որ փուլում է գետնին և ծառանման *J. oxycedrus* և *J. excelsa*: Այս վերջի տեսակն Աղաթափա թերակղզու վրայ հասնում է 1-1 $\frac{1}{2}$ սաժէն բարձրութեան, իսկ Ջիլ գիւղից վերև 2-3 սաժէնի: Նրա հաստութիւնը ներքևում հասնում է $\frac{1}{2}$ -արշինի, իսկ վերևում արագութեամբ բարականում է, և ծառին տալիս պիրամիդի տեսք:

Այս տեղի ցրտենու անտառի մէջ պատահում են նաև փշոտ խազիրանի տեսակները (*Astragalus Marschallianus*, *aureus*, *persicus*, *caucasicus*), էսպարսէտ (*Onobrychis cornuta*), շանկաթ (*Acatholimon glumaceum*) և այն բոլոր բոյսերը, որոնք նկատուում են արևմտեան լճափին, փոստային ճանապարհի մօտերը:

Մնում է մեզ ուշադրութիւն դարձնել Մեանայ լճափի դաշտային դօտու բուսականութեան վրայ: Գիւնէյի

լճափում, աւելի հիւսիսային կողմում, նա շատ նեղ շերտ է կազմում, որ միմիայն տեղ-տեղ ընդարձակում է, արևելեան կողմում, հետզհետե լայնանում և կազմում Զոգի դաշտավայրը, իսկ հարավ-արևմտեան մասում նա շատ աւելի ընդարձակ է քան Գիւնէյի կողմում, և ընդհարում է Ամանկանի լեռնաշղթայի փեշերին, որից բարձր սկսում են Ամանկանի ստորին—ալպեան արօտատեղիները:

Այս լճափեայ դաշտավայրը բուսաբանական տեսակետից կարելի է բաժանել երեք համակենդրոն գօտիների.

1Ճի անմիջապա՝ ափին նկատում են փխրուն շեղջաքարի (կոնյուրմերատի) երկգներ, որոնց մասին արդէն խօսելիք, սրանք ընդհատուհեւրով ձգւում են լճափին 2-50 սաժէն տարածութեամբ և ծածկուած են ողորմելի և աղքատ բուսականութեան ներկայացուցիչներով, որոնք այն աստիճան ցածր և նոսր են բուսում, որ կարծես թէ պատահմամբ են ընկել այստեղ: Համարեա ճիշտ լճափին տեղ տեղ պատահում է *isatis brachycarpa*, որ յատուկ է Սևանայ լճափին, իսկ ամենից շատ՝ օշինդր (*Artemisia austriaca*), ուստի և այս շրջանը կարելի է կոչել օշինդրի դաշտ: Ստանի խուռն բուսում են նաև պատուտակ (*Convolvulus lineatus*), ձիակորեկ կամ սև ցորեն (*Polygonum sp.*), մատնունի (*Potentilla bifurca*): Այս տեղերի համար շատ ընտրոշ է կովկասեան կակաչը (*Papaver caucasicus*), խրոընդատը (*Verbascum sp.*), Գարձեալ պատահում են եղիսպակ, քարացունծ (*Salvia verbascifolia*), *Arenaria serpyllifolia*, վերջապէս օշինդրից ոչ սակաւ քանակութեամբ ցրուած *Bromus tectorum* և *Carex sp.*

Ենտրելւ այն հանգամանքի, որ աւազը շատ է ընդունում ջերմութիւն, այս բոյսերը շուտով չորանում են, և մայիսի վերջին անգամ այս շրջանը շատ տխուր և այրուած տեսք է ստանում, մանաւանդ երբ միացած է լինում լճափեայ բուսականութեան երկրորդ գօտու հետ, որ տարածւում է ճահիճների և լճակների շուրջը: Այս գօտին ևս մի անընդհատ տարածութիւն չի բռնում, այլ բոլորում է միմեանցից քիչ թէ շատ հեռու գտնուող ճահիճների և լճակների շուրջը:

Միայն Զոգի դաշտավայրում, Գիլլի լճի և համանուն, միմեանց կից, ճահիճների շուրջը այս գօտին բռնում է մի անընդմիջուող տարածութիւն: Այստեղ առաւելապէս բուս-

նում են եղեգներ, որոնց մէջը վխտում են ճահճային թրուշուներ:

Գրիլի ջրային բուսականութիւնը միանգամայն նման է Սևանայ լճի և լճափնեայ ջրային բուսականութեան. գերիշխում են հազարտերևուկը (*Myriophyllum spicatum*) և *Lemna trisulca*, որոնց լճի կատաղած ալիքները մեծ քանակութեամբ շարտում են ափը, ապա՝ շահադէտ աղբերաց կամ հասկ ջուրը (*Potamogeton perfoliatus* L.), *Entheromorpha intestinalis*, յետոյ *Ranunculus aquatilis*, *Hippuris vulgaris* Մատիտեղն (*Polygonum amphibium*), սիւսամբար (*Alisma plantago*), բերոնիկէ կամ վերոնիքէ (*Veronica Anagallis*), ճահիճների ափերին, թաց հողի մէջ հրսնուկ, (*Ranunculus sceleratus*), աւույտ (*Trifolium repens*), և ճահճային բոյսերի մի փարթած գորգ. և յետոյ ջրասէր բոյսերի մի ամբողջ կազմութիւն.—

Մատնուկի (*Potentilla anserina*). *Trifolium fragiferum*, գառնայեզու, ջղախոտ (*Plantago major*) և այլն:

Ապա սկսում է լճափեայ դաշտավայրերի բուսականութեան երրորդ գօտին, որ ձգւում է առաջին երկուսի շուրջը, համեմատաբար աւելի լայն շերտով: Այս գօտին յաճախ ընդհարւում է լճափեայ, օշինդրային գօտու հետ, այնպէս որ վերոյիշեալ լճափեայ ճահիճներն ու լճափներն ընկնում են այս երկուսի մէջ. սակայն նրանք նա սնմիջապէս միանում է լճափին: Այս երրորդ գօտու բուսականութիւնը նման է հարաւային լեռների կաւոտ լանջերի բուսականութեան, միայն նրանից աւելի աղքատ է; միատեսակ, սակայն այս միատեսակութիւնը կայանում է միաժամանակ մի քանի տեսակների գերիշխանութեան մէջ: Այդ տեսակներից են՝ վայրի դաղձ (*Nepeta Moussini*), գարնանածաղիկ կամ կովաղնձուկ (*Stachys recta*), եղիսպակ, կենեղուտ (*Salvia verticillata*) և *Sitvestris*, յափրուկ (*Reseda lutea*). կաղանջանն կամ երկաթնուկ (*Euphorbia gerardiana* և *Crambe orientalis*).—Վերջին երկուսը շատ տեղեր սաստիկ գերիշխում են և կազմում անընդհատ մարգեր.— կաղանջանը կամ երկաթնուկը (*Euphorbia Gerardiana*), բարձմենակի (*Achillea ciliata* և *A. millefolium*)-ի հետ հարաւարեմտեան ափին, իսկ *Crambe* Զողի դաշտավայրի հիւսիսային կիսում, ուր նա տաղտկալի տեսք է տալիս բուսական դաշտանկարին, կազմելով սպիտակ խրձերի մի ընդարձակ դաշտ: Տեղ տեղ միայն պատահում են ասպիրակ

(*Astragalus alopecuroides*) և չորային մանր բոյսեր, ինչպէս՝ պատուտակ (*Convolvulus lineatus*). *Nonnea pulla*, բերանիկէ (*Veronica orientalis.*), գառնալեզու (*Plantago montana*), սիբեխ (*Scorzonera laciniata*):

Ընդհանրապէս դաշտավայրի բուսականութիւնը շատ աղքատ և նոսր է: Եւ քանի որ լեռների հարաւային լանջերը աւելի հարուստ են դաշտային բուսականութեան ներկայացուցիչներով, չի կարելի արդեօք այդ, բացի բոյսերի կեանքի պայմանների տարբերութիւնից, բացատրել նաև նրանով, որ լեռները պատնէշ են հանդիսանում քամիների դէմ և այսպիսով պահում են նրանց տարած գնահղան բոյսերի սերմերը, մինչդեռ դաշտավայրում նրանց ոչինչ չի բնուում և քամին տանում է հեռու, մինչև լեռները:

Այժմ Ձողի դաշտավայրի մեծազոյն մասը ծածկուած է ջրարբի արտերով, և համարում է սաստիկ հացառատ նրան մինչև անգամ անուանում են Լրևանեան նահանգի սշտեմարան: Յոնիսի սկզբին այս արտերի տարածութիւնը ներկուած է լինում միապաղաղ դեղին զոյնով, շնորհիւ ծաղկող մանանեխի (*Sinapis arvensis* var. *orientalis*), որ գերիշխում է այստեղ:

Այժմ անցնենք թփերի, անտառային և լեռնային արօտպտեղերի բուսականութեան նկարագրութեան:

Թփերը բուսնում են նեղ ձորակներում, ինչպէս օր. Բալըղ-չայի ձորակում, լեռների հիւսիսային և հիւսիս-արևմտեան լանջերի երկարութեամբ ձգուող ծալքերի մէջ, ինչպէս օր. Չուբուխլու գիւղի հանդէպ, Ինակ-տաղ և Քէօթան-դաղ լեռների վրայ, ինչպէս և Ագա-թափա թերակղզու վրայ: Այստեղ, Գիւնէյի չոր և տաք յճափին բուսնող թփերի տեսակներն են. *Cotoneaster vulgaris*, *Lonicera Caucasica* և *Lonicera Xylosteum*. գերամաստի (*Viburnum Lantana*), կոծախուրի (*Berberis vulgaris*), մասրի (*Rosa rubiginosa* L.) ջիրանցի (*Spiraea crenifolia*), վայրի կեռասենի (*Prunus padus*), սին (*Sorbus aucuparia*, S. *Aria*), սև հաղարջ (*Ribes nigra*, *Ribes grossularia*), *Amelanchier vulgaris* Mönch, սգնի (*Crataegus orientalis*) և ուրիշներ:

Այս թփերը խմբուելով կազմում են անանցանելի մացառներ: Սրանց հովանու տակ աճում են մեծ մասամբ անտառային խոտեր, ինչպէս. *Linum hirsutum*, վայրի դաղձ (*Nepeta grandiflora*), կատուախոտ (*Valeriana allia-*

riaefolia), երկաթնուկ (*Euphorbia aspera*), սանամարի (*Thalictrum foetidum.*), հրեշտակաց բոյսի մի տեսակը՝ *Chaerophyllum aureum*, մոշայ (*geum urbanum L.*) աղանակտուց, խորդենի (*geranium silvaticum*), մզամուսնճ (*Vicia Balansae*), հոսի, մկնամրգի (*Astragalus fruticosus*), բողկի տակ (*Pyrrhtrum carneum*) սակաւ, խոտվախոտ (*Scrophularia orientalis*), *Cerastium dahuricum* և այլն:

Վերոյիշեալ թփերի տեսակներին, աւելի հարաւային կողմում, Սատանախաչ գիւղի մօտ, այնտեղ, ուր վերջանում է ցրտենու անտառն, աւելանում են նաև լանձորենի, տանձենի, *Rhamnus arctostaphylos*.

Անտառները գտնուում են դաւառի հիւսիս-արևմտեան անկիւնում, Դարաչիչակի կամ Ծաղկածորի վիճակում և բնում են 300 ք. վերստից աւելի տարածութիւն: Այս անտառի յառաջացման գլխաւոր պատճառներէից մէկն էլ պիտի համարել և այն, որ նրա տեղը հիանալի կերպով պաշտպանուած է բարձր լեռնաշղթաներով: Իւսիսից նա շրջապատուած է Փամբակի լեռնաշղթայով (10,000 ոտ.), իսկ հարաւում Սուրբգանի լեռնաշղթան պաշտպանում է նրան հարաւային, այսպէս կոչուած «երևանեան քամու» շորացուցիչ ազդեցութիւնից:

Դարաչիչակի անտառի գլխաւոր ներկայացուցիչը կաղնին է, (*Quercus pubescens*), որ բոլոր տեսակներից բազմաթիւ է: Նա շատ խիստ է բուսնում, միայն շատ չի աճում, սովորաբար 3 սաժէնից աւելի չի բարձրանում և հազիւ $\frac{1}{4}$ արշին տրամագիծ է ունենում:

Դարաչիչակի անտառում միակ փշատերև ծառը հանդիսանում է ցրտենին, ցրուած անտառային շրջանի հարաւ — արևելեան ծայրում, Կախսի և Բջնի գիւղերի մէջ և, փոքր ինչ հեռու, լեռնաշղթայի հարաւ-արևելեան թեք լանջին, որ ստորոտում ոռոգւում է Զանգի գետով: Այս փոքրիկ տարածութեան վրայ այդ ցրտենին կազմում է մի փոքրիկ անտառ, լի դազի թփերով, ինչպէս Գիւնէյի լճափին: Հնումը ցրտենին Դարաչիչակի անտառում շատ աւելի էր տարածուած, սակայն հետզհետէ պատրաստելով փափուկ սևահող՝ տեղի է տուել կաղնուն: Այնպէս որ Դարաչիչակի անտառը պէտք է նկատել որպէս կաղնու անտառ: Այդտեղ կան և ուրիշ տեսակ ծառեր. ներքին շերտերում ամբողջ հրապարակներ բնուում են վայրի

խնձորենիներով և տանձենիներով: Նաև լորին (*Թմրի*, *Ան-
na, tilia*) ներքևում կազմում է մացառներ: Ուշադրաւ է
այստեղի մանրատերե լորին (*Tilia parvifolia*), որ ըստ
Մեդվեդևի, լորի բոլոր տեսակներից աւելի քիչ է տարա-
ծուած կովկասում, և յատուկ է, համարեա բացառապէս,
լեռնային անտառների վերին շերտին:

Ներքևում սովորաբար պատահում են սևանի կամ ող-
կուզարնր կեռաս (*Prunus padus*), խուրենի (*Evonymus
latifolius*), սղնի (*Crataegus orientalis*), կոծախուրի (*Ber-
beris vulgaris*), *Lonicera caucasica*, հրչակ (*Daphne
Mezereum*), գերամաստի (*Viburnum Lantana*) և այլն:

Դէպի վեր բարձրանալիս՝ մի բան սաստիկ աչքի է
բնկնում. — ծառերը հետզհետէ փոքրանում են, նոսրանում,
ծուան ու մուռ բուսնում և խղճալի տեսք ընդունում:

Անտառի վերին սահմանն անցնում է մօտաւորապէս
7¹/₂-8 հազար ոտնաչափ բարձրութեան վրայով և վերջա-
նում է հետեհալ ծառերով. *Ribes alpinum*, սին (*Sorbus
aucuparia*), գերամաստի (*Viburnum Lantana*), կէչի
(*Betula alba*) և մասրի (*Rosa sp.*), իսկ մի քանի տեղե-
րում, ինչպէս Միսիսանի հովտում, անտառի վերին սահմանի
ծառերը բացառապէս կէչի են, նրա սովորական *var. pu-
bescens* տեսակը և արտասուղ ուսնին. ուշադրաւ է,
որ սրա բուսական հաստ բունը ուղահայեաց չի բարձրա-
նում, այլ փուռում է գետնի վրայ, այնպէս որ ծառի գա-
գաթը ներքև է նայում: Այսպիսի սպիտակ բների շարքը,
որ փոռած է գետնի երեսին, ներքև ուղուած գագաթնե-
րի ճիւղերով, մի ինքնատիպ պատկեր է ներկայացնում,
որ հրապոյրից զուրկ չէ և շատ լաւ բացատրում է քամու
աղդեցութիւնը, սևահողի աննշան հաստութիւնը և ընդ-
հանրապէս այն խիստ պայմանները, որ ծառը ստիպուած
է կրել այս բարձրութեան վրայ:

Մնում է նկարագրել մեր անսառայիև շրջանի խո-
տայիև յուսականոքիւնը:

Անտառի խորքում գետի ը ծածկուած է լինում չոր
տերևներով և խոտ համարնա թէ չկայ: Սրա փոխարէն
նրանք անստութեամբ բուսնում են անտառի եզրերում և
նեղլիկ ձորակների լանջերին:

Այս ձորակների յատակին (ինչպէս օր. Ալլբէէ կերան
ձորակում), փտակների օփերին խիտ բուսնում են պտեր
(*Asplenium Felix mas.*), մորենու թփեր, դամակոսի

խաղող (крыжовника), կարմիր և սև հաղարջենի և այլն: Մառերի սաղարթները միանալով միմեանց կազմում են կամարներ, որոնց հովանու տակ պնտում են ստուերասէր ասպրիկը (*Asperula odorata*) զգայուն հինածաղիկը, (*Impatiens noli tangere*), *Saxifraga orientalis*, *Lathyrus roseus*, դրոն (*Vicia Balansae*), աղանակաուց (*Geranium Robertianum*), *Actea spicata*, մատնածաղիկ (*Digitalis ferruginea*), երկաթնուկ (*Euphorbia aspera*), *Lysimachia punctata*, կատուախոտ (*Valeriana officinalis*) և *alliariaefolia* և ուրիշներ. ջրի մօտ՝ սև վրացկոճի (*Veratrum album*) և խոլորձ (*Orchis latifolia*), Լեռնային բնորոշ խոտերի թուփն պատկանում են նաև հարսնուկը (*Anemone caucasica*), ալոնիտոն (*Aconitum nasutum*), շամպդիտակ (*Delphinium ciliatum*), կոճոճ (*Agrimonia Eupatoria*), աղանակաուց (*Geranium silvestris*, *G. pyrenaicum*, *G. ibericum*), *Hesperis matronalis*, կտաւստ (*Linum hirsutum*), *Astrautia helleborifolia*, *Ferulago silvatica* *Chaerophyllum aureum*, երնջակ (*Eringium giganteum*), անիսան (*Pimpinella rhodanta*) բիսամ ծծուկ (*Orobus cyaneus*), ուլոն (*Lathyrus pratensis*), *Silene inflata*, *S. fimbriata*, *S. compacta*, զանգակ ծաղիկ (*Campanula latifolia*, *C. eriocarpa*, *C. glomerata*), հոտախոտ (*Clinopodium vulgare*) քարահերձ (*Brunella vulgaris*), չուսերմ (*Betonica officinalis*) կովացնձուկ *Stachys germanica* և ուրիշ շատեր:

Անտառի վերին սահմանում շատ անգամ պատահում են *Solidago virgaurea*, որպէս ստորիկ-ալպեան մարգագեղեկների բանբեր: Այս վերջին շրջանն սկսում է անտառների սահմանից յետոյ 7¹/₂-8 հազար ոտնաչափից բարձր:

Այս շրջանի ստորին մասում շատ լաւ գարի է բուսնում, միայն շատ անգամ ցուրտը տանում է:

Որպէս այս ստորին — ալպեան մարգագետինների բուսականութեան բանբեր կարելի է համարել *macrotomia echiodes*, որի դեղնաւոյն պսակի բերանը շուրջանակի ծածկուած է սև բծերով, յետոյ բերննիկէնի տեսակները (*Veronica gentianoides*, *V. armena*), ապա հրանունկի տեսակները (*Ranunculus caucasicus*, *R. dissectus* և *R. oreophilus*).

Մալխի վերջին ստորին-ալպեան շրջանում գտնուած դաշտերը, լեռների լանջերը և հարթութիւնները դեղին

գոյն ունին շնորհիւ ծաղկած դրաբի (*Draba brunniaefolia*): Այս գեղնադոյն Ֆօնի վրայ սփռուած են գարնանա-
յին ուրիշ մանրիկ երփներանգ բոյսեր, ինչպէս *Anemone*
albana, *Androsace armeniaca*, մատնուճի (*Potentilla*
sp.), կովայնձուկ (*Primula farinosa*, *P. macrocalyx* Bge.)
և *Pallassii* Lehm, վերոյիշեալ բերինիկէն (*veronica*
gentianoides և *armena*), գառնադմակ (*Ajuga orientalis*), և
փոքրիկ բող (*Gentiana verna* L.):

Փոքր ինչ ուշ, բարձրավանդակների վրայ ալպեան
մկնականջը (*Myosotis*, *незабудка*) տեղ տեղ կազմում է կա-
պուտակ գորգ, կողքին ձգուած բայ-շեփորագոյն երիզներ՝
բերիկիկից (*veronica orientalis*): Ընդհանրապէս կարելի
է նկատել, որ գարնանը ստորին-ալպեան մարգագետին-
ները բոյսերի քիչ տեսակներ են ունենում, որովհետև շա-
տերն այս բարձրութեան յատուկ կլիմայի քմահաճոյքնե-
րին չեն կարողանում դիմանալ: Եւ եթէ ամբողջ տարա-
ծութիւններ բռնուած են սիայն միջանի տեսակ բոյսերով,
սա ամենալաւ ապացոյցն է, որ նրանք յարմարուել են
տեղական պայմանների:

Բոլորովին այլ է ամառը, որ տևում է այտեղ եր-
կուս ու կէս ամիս, յունիսի կիսից մինչև օգոստոս պա-
րառարար, երբ միաժամանակ բաւականաչափ ջերմութիւնն
ու խոնաւութիւնը, առատ լոյսի հետ թոյլ են տալիս հա-
րուստ հողին արտայայտելու իւր արդիւնաբերող ուժի ամ-
բողջ փարթամութիւնը: Այն ժամանակ այտեղ կանաչի
զմբուխտային Ֆօնի վրայ վառ գոյներով վառուում են միլ-
լիծաւոր երփներանգ պսակներ: Դժուար է նկարագրել
ստորին-ալպեան բուսականութեան այս ժամանակի ծա-
ղիկների պերճութիւնն ու երփը. ամեն տեղ սփռուած են
ծաղիկների ու կանաչի ահագին շերտեր, կարմիր խորդե-
նի (*geranium*, *гераній*) ձիւնափայլ և վարդագոյն պտեր,
հարսնուկ (*Anemone narcissiflora*), գեղեցիկ *Aetheo-*
rappus pulcherrimus), մեխակ, մատնուճի, *Potentilla*
(*лапчатка*), ընձախոտ (*лютики*), բազմազան երեքնուկ-
ներ (*Trifolium alpestre*, *T. thrichocephalum*, *T. canescens*,
T. ambiguum և այլն), լոռասերմ (*Betonica gran-*
diflora, *астры*), զանազան գոյնի տերփուկ (*Centaurea*
axillaris, *горные васильки*), մկնականջ, *Astrantia hellebo-*
rifolia, (*звѣздовка*), կալիչ, (*Papaver orientalis*), մա-
տիտեղ (*Poligonum alpinum*). մանաւանդ բազմաթիւ են

եղերգակ (*Crepis sibirica*), առիւծատափ (Leontodon sp.) բազէարոյս (*Hieracium* sp.), ագասեակ (*Solidago virga aurea*), յետոյ մատիանդ (*Poligonum bistorta*), կընծմն-ծուկ (*Thalictrum minus*), առիւծաթաթ (*Alchemilla vulgaris*) և այլն:

Համարեա արշինաչափ բարձրութեան հասնող վերոյիշեալ խոտային ծածկոցի վրայ տեղ տեղ տարածում է իւր փարթամ ծաղիկները կովկասեան շուշանը (*Lilium monadelphum*) սաժէնաչափ սկէտունկը (*Cephalaria tatarica*), լայնատարած շամպղիտայը (*Sympytum asperimum*), վայրի արջամաղիլը (*Heracleum* sp.) և վերջապէս սև վրացկոճին (*veratrum album.*) այս վերջինս աւելի լինում է աղբիւրների մօտ, որ թաքնւում են ոսկէ ծաղիկների, *Caltha polysepala*, խիտ կոյտերի տակ, ուր տարածում է իւր անաղին տերևները թրթնջուկը (*Rumex alpinus.*) այստեղ ջրերի մօտ սովորական են *Cardamine uliginosa* և *C. impatiens*, *Geranium palustre* և ուրիշները:

Այս ստորին—ալպեան մարգագետինները շատ հարուստ արօտատեղիներ ունին, ուստի և ամառը բազմաթիւ քրդեր և թուրքեր են գալիս Երևանի, Գանձակի և մինչև անգամ Թիֆլիսի նահանգներից:

Ամենից աւելի գովուած է Ահմանկանի արօտատեղիները, որ տարածւում են Ահմանկան լեռնաշղթայի բարձր լանջերում, մօտ 100 վերստ երկարութեամբ: Այս անաղին տաշածութիւնը պատկանում է պետական գանձարանին, որ մաս մաս կապալով է տալիս ժողովրդին:

Իննը հազար ոտնաչափից բարձր բուսականութիւնը բոլորովին փոխւում է: Ճշմարիտ է, այստեղ դեռ պատահում են ստորին—ալպեան մարգագետինների մի քանի տեսակները—լուսանբմ (*Betonica grandiflora*), ոսկետունկ (*Cephalaria tatarica*), հիմայ արդէն առ առաւելը $\frac{1}{4}$ արշին բարձրութեան, փերփուկ (*Centaurea axillaris*) և մի քանի ուրիշներ, բայց արդէն նրանք չեն կազմում բուսական գորգը, այլ նարգիսի (*Nardus sfricta*) փափուկ սէզը և *Sibbaldia procumbens*, *Alsine aizoides*, *Alsine recurva*, մատնունի (*Potentilla argaea* Boiss և Bel), գառնադմակ (*Sedum tenellum*), գանգակ ծաղիկ (*Campanula tridentata*) և ուրիշներ:

Սրանք, ըստ երևոյթին, կազմում են անցողական շերտը

ստորին—ալպիական արօտատեղիներինց, դէպի տիպական ալպիական մարգագետինը: Սրանով էլ վերջանում է Ալիբէկ լեռան (9382 ոտ.) գագաթը, որ մեր անտառային շրջանում ամենաբարձրն է:

Լեռնային բուսականութեան տեսութիւնը լրացնելու համար հարկաւոր է յիշել այն ինքնատիպ, քնքոյշ, շուտ թառամող զարնանային բոյսերը, որոնք երփներանգ շրջանակ են կազմում բարձր լեռների կատարներին ամառուայ կիսին մնացած հալչող ձեան շերտերին:

Այսպիսի տեղերում լինում են. կմշարուկ (*Scilla cernua*), մէջ ընդ մէջ *Pousschinia scilloides*, որոնց մէջ ծաղկում են *Merendera caucasica*, գագէա (*gagea* sp.) *Muscari* sp. վերջապէս հէնց ձեան մօտ կարճատև հրանունդ (*Renunculus edulis* Boiss): Այստեղ, ձեան շերտի մօտ, Ալիբէկ լեռան վրայ գտնուել է մի շատ հազուագիւտ տեսակ—*Erysimum gelidum*. Այս բոյսերն աւելի և աւելի բարձրանալով՝ լեռան վերին շերտերում բաց են անում զարնանային եղանակ, մինչդեռ ներքևում, ստորին-ալպեան մարգագետիններում սաստիկ ամառ է, իսկ հովիտներում արդէն օսկէզօծւում են հացահատիկները ¹⁾:



¹⁾ Բաղուածօրէն կազմել եմ «Сборникъ матеріаловъ для описанія мѣстностей и племень Кавказа» հրատարակութեան XXVII գրքում տպուած պ. Պոցիատովսկու «Обзоръ флоры окрестностей озера Гокча» յօդուածինց:

